ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշման՝

- վերնագրում «Ցեմենտներին» բառից հետո լրացնել «, պորտլանդցեմենտային կլինկերին» բառերը.
- նախաբանում նշված «Ստանդարտացման մասին» բառերը փոխարինել «Տեխնիկական կանոնակարգման մասին» բառերով, իսկ «հոդվածի» բառից հետո լրացնել «1-ին կետի 3-րդ ենթակետի ա. պարբերության» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի N 1136-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

- 1-ին կետում «Պորտլանդցեմենտ 2523» բառերից հետո լրացնել «պորտլանդցեմենտային կլինկեր 2523 10 000 0 » բառերով:

«II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ » 2-րդ գլխի 4-րդ կետի «պորտլանդցեմենտային կլինկեր (K)՝» հասկացության սահմանման մեջ «կլինկեր» բառից հետո ավելացնել «(այսուհետ՝ կլինկեր»բառերը.

- 2, 5, 29, 30, 31, 35, 38, 39-րդ կետերի, 21-րդ կետի 1-ին պարբերության, բ), է) ենթակետերի «ցեմենտների» բառից հետո լրացնել «, կլինկերի»

բառը.

- 18, 19,20,22, 23-րդ կետերում «ցեմենտը» բառը փոխարինել «ցեմենտները, կլինկերը» բառերով.
- 6-րդ կետի «պետք է ուղեկցվեն» բառերից հետո լրացնել «հայերեն մակնշմամբ» բառերը և հանել «կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով» բառերը:
- 6, 7 –րդ կետերի «ցեմենտները» բառերից հետո լրացնել «, կլինկերը» բառերով:
- 12-րդ կետով սահմանված 2-րդ աղյուսակում ավելացնել «Ցեմենտների ծռման ամրությունը» սյունյակը, (ըստ ցեմենտների ամրության դասերի), խմբագրել «Կապակցման սկիզբը, որպե, ոչ շուտ» սյունյակը և խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Աղյուսակ N 2

Ամրության դասը	**Ծռման ամրությունը, ՄՊա /ոչ պակաս/**	**Սեղմման ամրությունը, ՄՊա**				**Կապակցում**		**Ծավալի փոփոխման հավասարաչափ փոխությունը (ընդարձակում), մմ, ոչ ավելի**
		վաղ ամրություն		**ստանդարտ ամրություն**				
		2 օրական հասա-կում, ոչ պակաս	**7 օրական հասա-կում, ոչ պակաս**	**28 օրական հասակում ոչ պակաս**	**ոչ ավելի**	**սկիզբ վերջը, ոչ շուտ**	**ը, որպե, ոչ ուշ**	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
22.5N	-	-	11.0	22.5	42.5	75	10	10
32.5N	5.5	-	16.0	32.5	52.5			
32.5R	5.5	10.0	-					
42.5N	6.0	10.0	-	42.5	62.5	60	10	
42.5R	6.0	20.0	-					
52.5N	6.5	20.0	-	52.5	-	45	10	
52.5R	6.5	30.0	-					

Ցեմենտի աղացվածքի մանրությունը N 008 մաղի վրայի մնացորդը	ոչ ավել քան 15%
Ցեմենտներում տեսակարար մակերեսը համաձայն Բլեյնի մեթոդի	ոչ պակաս քան 2800 սմ^2/գ և ոչ ավելի քան 4000 սմ^2/գ
Ցեմենտի ամրությունը ծռման դեպքում	Ստանդարտ 28 օրական հասակում

- 13-րդ կետում «Ցեմենտների» բառերից հետո լրացնել «և կլինկերի» բառերով, «N 3 աղյուսակով» բառերը փոխարինել «N 3 և N 4 աղյուսակներով» բառերով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ Աղյուսակ N 4- ով.

Աղյուսակ N 4

Կլինկերում ցուցանիշի անվանումը	Ցուցանիշը, %
Զանգվածի կորուստը շիկացման ժամանակ, ոչ ավելի	5,0
Չլուծվող մնացորդ, ոչ ավելի	5,0
SiO2 զանգվածային մասը	Չի նորմ
CaO	Չի նորմ
Կլինկերում ազատ CaO	1
Կլինկերում MgO պարունակությունը ոչ ավելի	5
Al2O3	չի նորմավորվում
Fe2O3	չի նորմավորվում

- Հավելվածի բոլոր գլուխները համարակալել արաբական թվանշաններով:
- 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 17.1 կետ.

«17.1 Ցեմենտների մեջ արգելվում է ավելացնել օժանդակ բաղադրիչներ, տեխնոլոգիական և հատուկ հավելույթներ, որոնք բարձրացնում են ցեմենտի վտանգի դասը:»:

- **«ՑԵՄԵՆՏՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՓՈԽԱԴՐՈՒՄԸ»** և **«ՑԵՄԵՆՏՆԵՐԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ»** գլխի անվանումից հանել **«ՑԵՄԵՆՏՆԵՐԻ»** բառը:
- 19-րդ կետի «51» թիվը փոխել «50» թվով, իսկ «կգ-ն» բառից հետո լրացնել «, ցեմենտի միջին զանգվածի շեղումը փաթեթում նշված զանգվածի մեջ, չպետք է լինի ավել քան զտաքաշի + 1.0% ; -0,4%:»:
- 20-րդ և 21-րդ կետերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«20. Առանց փաթեթվածքի փոխադրման ժամանակ ցեմենտները և կլինկերը պետք է բեռնառաքվեն հատուկ նշանակության փոխադրամիջոցներով (հատուկ սարքավորված մեքենաներ, ավտոցեմենտատարներ, ցեմենտատար վագոններ, նավեր):

«21. Ցեմենտների և կլինկերի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի ապրանքաուղեկից փաստաթղթերով, որտեղ պետք է նշված լինեն հետևյալ տվյալները՝

- արտադրող կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը և հասցեն,
- արտադրանքի պայմանական նշագիրը կամ լրիվ անվանումը,
- խմբաքանակի համարը և բեռնառաքման ամսաթիվը,
- արտադրանքում հանքային հավելույթների տեսակը և քանակը,
- արտադրանքի ամրության դասը,
- արտադրանքի երաշխիքային ժամկետը,

- փաթեթվածքում արտադրանքի զտաքաշը,
- բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ ԱԷՖ ակտիվությունը,
- փոխադրամիջոցի համարանիշը,
- համապատասխանության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը,
- համապատասխանության ազգային նշանը և նորմատիվ փաստաթղթի նշումը, որի համաձայն արտադրվել է արտադրանքը:»:

- 20-րդ, 22-րդ կետի «ցեմենտը» բառը փոխարինել «ցեմենտները» բառով և հետո լրացնել «, կլինկեր» բառը:
- 23-րդ կետի «պահվի» բառը փոխարինել «պահվեն» բառով:
- 29-րդ կետը29-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«29. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ցեմենտների, կլինկերի խմբաքանակի կամ սերիական արտադրության համար համապատասխանությունը հավաստելու համար հայտատուն՝

1) պետք է կիրառի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման ընթացակարգերը խմբաքանակի կամ սերիական արտադրության համար.

2) պետք է դնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ սահմանված համապատասխանության ազգային նշանը ցեմենտների, կլինկերի փաթեթի կամ պիտակի վրա, իսկ գործընթացների համար՝ նաև օգտագործվող գովազդային նյութերում»:

- 31-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սերիական արտադրության ժամանակ ցեմենտների, կլինկերի բաղադրությունը պետք է որոշվի ցեմենտների կլինկերի արտադրման վայրում ընտրված նմուշով՝ ըստ վկայագրված մեթոդակարգերի:»
- 33-րդ կետից հանել «, եթե համապատասխանության գնահատումն իրականացվել է Ձ համապատասխանության գնահատման ընթացակարգով» բառերը:
- 34-րդ կետի.

ա. 1-ին պարբերության «Համապատասխանության» բառից առաջ լրացնել «Սերիական արտադրության» բառերը:

բ. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Խմբաքանակի համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ արտադրման ժամկետի, բայց ոչ ավելի քան պիտանիության ժամկետն է:»:

- 35-րդ կետում «ցեմենտների» բառը փոխարինել «արտադրանքի»բառով:
- 37-րդ կետում «արտադրողին և գրավոր ծանուցում ստուգումներ

իրականացնող իրավասու մարմիններին» բառերը փոխարինել «հայտատուին, արտադրողին և գրավոր ծանուցում է պետական վերահսկողություն իրականացնող մարմիններին» բառերով:

- 39-րդ կետի «Համապատասխանության գնահատման մասին» բառերը փոխարինել ««Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»» բառերով, «սահմանված կարգով» բառերից առաջ լրացնել «և այլ իրավական ակտերով» բառերը:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 2-րդ կետով սահմանված պահանջների կիրարկումն ապահովող և կամավոր սկզբունքով կիրառվող ստանդարտների ցանկի հրապարակումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 180-երորդ օրը: